

Արմենի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ

Փանգի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Երբ. Ժ. 3

«PANPERE» Revue mens. religieuse des Eglises Evangéliques Arméniennes de France
Rédacteurs-Administrateurs: M. M. les Pasteurs GHAZAROSSIAN, BOUDAKIAN et M. MISSIRIAN

22^e Année.—Août-Octobre 1946, N^o 8-10

ԻՐ ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ 1946 ԹԻՒ 8-10

Տարեկան Բաժանորդագրութիւն.— Ֆրանսա՝ 50 ֆր.

Արտասահման՝ սէկ լամբրիկեան Տոլար

ԳԱՂՏՆԻՔ ԵՌԱՆԴԻ ԵՒ ԶՕՐՈՒԹԵԱՆ

Հայաստանեայց Աւետ. Եկեղեցին ծնաւ հայ
Հուսաւորչական եկեղեցւոյ հոգեւոր տարրին եր-
կունքէն: Եկեղեցւոյ բարեպաշտ տարրին մէջ
հետզհետէ հասունցաւ աւելի լուրջ և զուտ հո-
գեւորութեան մը հասնելու կարօտը:

Իբր եկեղեցին սիրող անհատներ, փափա-
քեցան որ իրականացնեն իրենց տեսիլքը բոլոր
եկեղեցիին համար: Շուտով տեսնուեցաւ սա-
կայն այս բարեկարգութեան անկարելիութիւնը:

Պաշտօնական եկեղեցին, թէհւ ցնցուած
չզգատացաւ և արտաքսեց արթուն և յառաջդի-
մասէր մասը: «Բարեպաշտական Միաբանու-
թեան» բանադրուած անդամները, որոնք կազմե-
ցին մեր Ա. Եկեղեցին Յուլիս 1, 1846 ին, անցան
փշոտ և տառապալից ճանապարհէ մը:

Մայր Եկեղեցին անոնց վերապահեց և զոր-
ծաղրեց իրեն կարելի եղած բոլոր խոտութիւ-
նը: Սակայն նորածին Հայ Աւետ. Եկ. ին իր դժ-
ւար վերելքը կատարեց հաւատարմօրէն կրե-
լով այն խաչը զոր Քրիստոս կը դնէր իր մա-
տաղ ուսերուն վրայ:

Ինչէ ալ փոքրաթիւ վկաներուն եռանդին
և զօրութեան զաղտնիքը: Կարելի է յիշել արտա-
քին և հոգեբանական պատճառներ: Առաջին Աւե-
տարանականները ըսինք - ծնան ցաւալի երկուն-
քէ մը: Անոնք ունեցան հոգեկան յեղաշրջում
մը: Խաւարէն լոյսի անցան: Խաբխափողներ դը-

տան Տէրովը գիտութիւնը: Նոր լոյսը գիրենք
ազատեց տարիներու նախապաշարունակէն, և յետ
այնու փոխան շուքին, իրականութիւնը գտած
էին: Սր. Գրքին և ընդ. զարգացման լոյսերը հե-
տըզհետէ նոր հորիզոններ կը բանային: Անոնք
լիաթոք կը շնչէին Աստուծոյ որդիներու ազատու-
թեան այս օգը, և կ'ապրէին իրենց ա. սիրոյն
հրայրքին մէջ. հալածանքը փոխան Հափաւո-
րելու կը հրահրէր իրենց խանդը:

Այս նկատողութիւնները իրական են: Սակայն
բացատրելու համար մեր Աւետ. Եկեղեցւոյն
խանդին ու զօրութեան բոլոր զաղտնիքը, հարկ
է խորացնել զանոնք և պրպտել անոնց հոգեւո-
րութեան խորքն ու ծալքերը: Եռանդ և զօրու-
թիւն արտայայտութիւններ են հոգեւոր կեանքի:

Ճանչնալ այդ կեանքը, տեսնել այդ կեան-
քին աճումն ու զործունէութիւնը, մեզ պիտի
տանէր անոնց զաղտնիքին:

Համոզուինք սա տարրական ճշմարտու-
թեան թէ մեր հայրերը, նորութիւններ փնտռող
օտարասէր յառաջդիմականներ չէին միայն ինչ-
պէս յաճախ կը պնդեն մեր հակառակորդները
այլ մանաւանդ մարդիկ՝ որոնք տիրացան իրա-
կան հոգեւոր կեանքի մը:

Անոնցմէ ոմանք փնտռողներ էին: Մտաւյ
մեղքի, սակայն ծարաւի թողութեան և յաղթա-
կան կեանքի: Կ'աշխատէին իրենց գիտցածին
պէս ճարտարելու շինելու համար իրենց փրկու-
թիւնը: Մեր Ա. հովիւը Ար. Իւթիմիոս կատար-
եալ փարիսեցիական հաւատարմութեամբ մը կը

պահէր եկեղեցւոյն կանոններն ու պատուէրները: Այլուր մենակեաց մը ինքնիրեն պարտադրած ճգնաւորական կեանքին, մի քանի ոսկոր մասունքներու մէջ մխիթարութիւն թողութիւն և ուժ կը փնտռէր:

Ուրիշնէր տգէտ կամ անտարբեր էին, զոհեր իրենց թմրած և անհոգ եկեղեցւոյն և անշահ կըղերին, որոնք սակայն մոռցուած չէին Աստուծոյ: Տէրը կը նախախնամէ անոնց համար: Աւետարան մը, թերթիկ մը, վկայութիւն մը, հոգեւոր տեսակցութիւն մը, կամ աղօթածողով մը յանկարծ Աստուծոյ թագաւորութիւնը կը բերէ այսպիսիներուն:

Որքան որ կրցած ենք ստուգել, մեր ա. հայրերը բոլորն ալ Աստուծոյ զաւակներ էին նորոգուած ապաշխարութեամբ և Սբ. Հոգւոյն լուսաւորութեամբ: Սբ. Հոգին և Սբ. Գիրքը զանոնք ազատած էին իրենց վախերէն և փնտրութիւններէն: Ազատած՝ մեռած դործերէն և ձեւական աստուածապաշտութենէ. թողութեան մխիթարութիւնը, փրկութեան ուրախութիւնը կը լեցնէին անոնց սրտերը: Աբբա հայր, կ'աղաղակէր ամէն սիրտ: Ձիտելով ոմանց խոր հաւատքին մասին, կ'արժէ վեր առնել թէ առհասարակ բոլորը «իմած էին կենաց ջուրի ակէն»:

Ահա սկզբնական կեանքը, պտղաբերութեան սկզբունքը: Լոյս և պտուղ, եռանդ և ուժ, բռնական արտայայտութիւններ էին իրենց հաւատքին:

2. — Այս եկեղեցին ուժ և եռանդ ունէր. վասնզի կը սնանէր Աստուծոյ անխարդախ խօսքով: Սբ. Գրոց տարածումը պատրաստեց գետինը՝ բարեկարգութեան: Անոր ուսուցումը՝ լուսաւորեց մտքեր և հալածեց խաւարը: Մեր հայրերը պարզապէս կը խմէին Աստուծոյ խօսքը, ի խնդիր նոր լոյսի, ճշմարտութեան և հոգեւոր սնունդի:

Աւետարանը, ահա՛ այն օրերու գանձը: Կարգալ և աղօթել, լսել և թալիլ, սերտել և սորվեցնել: Այս էր բնականը: Առօրեայ խօսակցութեան մէջ շատ տեղ կը բռնէր Աստուծոյ խօսքը: Մարդիկ իրենց գրպանները կը կրէին այդ օրերու հաստափոր գրքերը: Կարգալ գրել չգիտցողները կ'աշխատէին, Սբ. Գրոց հասնելու համար: Կիներ և աղջիկներ իսկ նոյն վսեմ նպատակին կը ձգտէին: Ծեր վարժապետներ կամ Աւետարանչուհիներ, նոյն նպատակը կը հետապնդէին տունէ տուն, հայերէն գոս տալով և Սբ. գիրքը կարդալով:

Տպարանը անդուլ կ'աշխատէր կամ Սբ. Գիրք տպելու կամ բացատրական գրքեր. Գրատունները լիաբուռն կը տարածէին զանոնք, գրածախներ, ի վին մեծ յոգնութեան, վասնզի և ամօթի կը ծախէին ու կը բացատրէին զայն:

Այնթապի և Կիլիկիոյ մեծ եկեղեցիները շատ բան կը պարտին Պետրոս հալածական վարդապետին, որ կը տարածէր Սբ. Գիրքը, խորապէս հերկելով և սերմանելով Աւետարանին գաղտը: Աստուծոյ խօսքը երբ այսքան առատ կը նետուի ժողովուրդի մը մէջ, չկրնար անպատուղ մնալ, Դարձեր, սրբացում, լոյս, ամէն հոգեւոր առաջնորդութիւն և յաղթանակներ բնական հետեւանքներ են: Ոչինչ այնքան կը նպաստէ քրիստոնէին եռանդին և զօրութեան որքան Աստուծոյ խօսքին ազատ և հաւատարիմ դործածութիւնը:

3. «Մէկտեղ ժողովուրդը չթողուլը» անոնց ուրիշ մէկ գաղտնիքն է: Մայրաքաղաքի չորս դին ցրուած հայեր (նոյնը գաւառներու մէջ) կը հաւաքուէին ամէն կարելի միջոցաւ: Ժողովի երթալ յաճախ ծախք, գուաւորութիւն և հալածանք ըսել էր, տակաւին անոնք կը բոլորուէին Աստուծոյ խօսքին ու Քրիստոսի շուրջ տուններու կամ գաղտնիք մէջ, մօտ կամ հեռի: Աղօթքի յորդորանքի եւ փոխադարձ խրախուսանքի մէջ կը նորոգէին իրենց ուժերը:

Այդ օրերուն հարկ չկար ստիպելու ժողովուրդը որ եկեղեցի գար: Ընդհակառակն ոչինչ կարող էր արգիլել զիրենք: Մեր եկեղեցւոյ կազմութենէն յետոյ պատրիարքարանր շատ աշխատեցաւ արգիլել, որոշ տան մը մէջ հաւաքուլը: Երկար դատէ յետոյ թուրք զատաւորը կը յայտարարէ. «կառավարութիւնը չկրնար ձեզի արտօնել որ հաւաքուլք այդ տանը մէջ»: «Էֆէնտի, կը պատասխանէ մեր ներկայացուցիչը, կը յորդորեմ Ձեզ որ պարապ տեղը չյոգնիք, զմեզ արգիլելու համար հաւաքուլի, ինչու որ կը յայտարարեմ Ձեզի, որ ոչ միայն ես այլ բոլոր հայ Աւետարանիչներն ալ պատրաստ են իրենց արիւնը թափելու այդ դատին համար: Մտածեցէք ուրեմն եթէ կ'ուզէք, մեզմէ ազատելու լաւագոյն միջոցներուն վրայ, ըլլայ աքսոր, սուր կամ հուր, բայց անօգուտ մեզի հրամայել չհաւաքուլի. մեր պարտականութիւնն ու խիղճը կը հրամային հնազանդիլ, մենք չենք կրնար դադրիլ զԱստուած պաշտելու համար միանալէ:

Այս վսեմ պատասխանը դատը շահեցուց: Կարելի է երեւակայել թէ հոգեւոր ինչ օրհնութիւններ կային, նմանօրինակ ոգիով տոգորուած ժողովականներու միջեւ:

4.—Այս բոլորը սակայն «մեռեալ ծովու» մը կրնար վերածուիլ, եթէ մեր հայրերը կանուխէն չըմբռնէին հոգեշահութեան իմաստութիւնն ու միսիոնարական ոգիին կարեւորութիւնը: Կրպակներդ եւ տուններու մէջ, քրիստոնեաներ կ'աշխատէին իրենց շրջանակին վրայ: Լուսաւորուած ա. քահանաները զարմանալի եռանդով կը քարոզէին, կ'այցելէին, եւ ամէն կերպ տեսակցութիւններով, հոգիները Քրիստոսի կ'առաջնորդէին: Իւթիւճեան չհանգչեցաւ, մինչեւ որ իր ամբողջ ընտանիքը չշահեցաւ Աստուծոյ: Հոգիներու փրկութիւնը, եւ եկեղեցւոյն ըստ Աւետարանի բարեկարգուիլը՝ կը կազմեն իրենց էն մեծ տենչը: Վերջինէս հայրիկ մինչեւ վերջին շունչը հաւատարիմ իր տեսիլքին, այսպէս կը կտակէր բիւթանկան միութեան ժողովին: «Թերեւս պիտի մեռնիմ, գի օրերս ալ իրիկուն եղած են, խօսէ այս սիրելի պաշտօնեաներուն որ մեր նախկին փառաւոր որոշումէն չի խախտին չվնասեն գործին, թող խնայեն ազգին, թող խնայեն անմահ հոգիներուն: Ի սկզբան մեր սըրտին ամենաջերմ բաղձանքն էր որ մեր եկեղեցին միշտ Աւետարանով բարեկարգուի եւ անոր մէջ կրօնքնու Աստուածպաշտութիւնը վերակենդանանայ: Այս պատուական նպատակէն չչեղինք, որ մեր սրտի պարծանքն է:

Հոգեշահութիւնը նոյն իսկ դուքս ելաւ մեր ազգային սահմաններէն, մեր ա. հայրերը կը հետաքրքրուէին հրէից միսիոնով. կ'աղօթէին, կը խօսէին, եւ կը նստէին անոնց ի նպաստ:

Յայտնի է թէ ոչինչ այնքան կը քաջալերէ որքան կրակէն յափշտակուած հոգի մը: «Եւ իւրաքանչիւր շուհած կեանք կ'աւելցնէ եկեղեցիին հաւատքը Աւետարանին ուժին եւ Քրիստոսի գերիշխանութեան նկատմամբ:

5. Անտարակոյս կարելի չէ այս տեղ հասնիլ առանց աղօթքի: Կը թուի թէ շատ ժամանակ կը տրուէր անհատական եւ հաւաքական աղօթքի: Լոյսի, շնորհքի, առաջնորդութեան եւ պաշտպանութեան համար, քրիստոնեաները կը նետուէին Աստուծոյ գիրկը: Հալածանքը եւ ամէն կերպ կառավարական կաշկանդումները, աւելի աղօթքի կը մղէին զանոնք: Այսպէս շատ

բաներ «երկրի վրայ քակուելէ առաջ երկինքի մէջ կը քակուէին» ոչ յաջողութիւն, ոչ ալ դժուարութիւն զիրենք ետ կը ձգէր այս օրհնեալ առանձնաշնորհումէն:

1840 ի Յուն վարին Ա. Բշ. օրը (կ'ըսէ Մր. Dwight) բոլոր միսիոնարական կայաններուն մէջ, հոշակուեցաւ ծումապահութեան, խոնարհեցման եւ աղօթքի օր: Անցեալ տարուայ զէպքերը եւ թերեւս ներկայ վիճակը կը միանային, շատ որոշ արժէք մը տալու այսօրուան: Տէրօջմէ շատ յարմար բաներ ունէինք խնդրելու: Աւետարանի յառաջխաղացման արգելքներու վերացուիլը՝ նոր տուններու բացումը ուսկից Աստուծոյ խօսքը կարենար ներս մտնել, Տէրօջը օրհնութիւնը մեր բնիկ եղբայրներուն վրայ, որ կարենան պայքարիլ իրր բարի զինուորներ, եւ Սբ. Հոգւոյն հեղումը, միսիոնարներու եւ բոլոր եղբայրներուն վրայ, պատրիարքներու եւ եպիսկոպոսներու, քահանաներու եւ բոլոր ժողովուրդին վրայ ինչ յարանուանութեան եւ ցեղի որ ալ պատկանած բլլան: Այս աղօթքներուն յատկացեալ օրը շատ լուսանցաւ, ու անոր յիշատակը անջինջ մնաց երկար ժամանակ:

Տարակոյս չկայ թէ Եկեղեցին նաեւ ունէր միջնորդին աղօթողներ յանձին միսիոնարներու: Անոնցմէ շատեր մեծարժէք հոգեւորներ էին, որ ծառայեցին իբր դայեակ եւ դաստիարակ մեր հայրերուն, նաեւ իբր առաջնորդ եւ աղօթակից: Անտարակոյս շատ օրհնութիւններ շնորհուեցան օտար բարեկամներու գաղտնի սննեակներու մէջէն, Աստուծոյ բարձրացած աղօթքներու ի պատասխան:

6. Վերջապէս պէտք է յիշել հալածանքն ու նեղութիւնը: Ի բնէ հայերը կրօնասէր եւ պահպանողական ժողովուրդ են: Առաքեալները, Լուսաւորիչ Սահակ-Մեսրոպ եւն, մեծ դժուարութեամբ կրցին վանել հեթանոսական կրօնքը մեր մէջէն: Նախնեաց հաւատքին կառչող հայերը, անիմանալի զոհողութիւնով պաշտպանեցին իրենց նոր կրօնը հերոսներու ձեռքով: 19-րդ դարուն նոյն խստութեամբ հակառակեցան բարեկարգութեան գաղափարին: Սակայն բարեկարգիչներն ալ իբր հարազատ զաւակները նոյն տեսլապաշտ եւ կրօնասէր ազգին, գիտցան հաւատարիմ մնալ եւ իրենց անձերը չսիրե մինչեւ ի մահ:

Սկիզբէն կարծուեցաւ որ մի քանի բռնապետական միջոցներ դիւրաւ պիտի խեղդէին

«Կենաց բոցը» մեր հայրերուն սրտին մէջ: Ձեր-
բակալութիւն, աքսոր բանտ, ծեծ, շղթայ:
Գործի զրկանք, տնտեսական կործանում, բնա-
կարանի տափնապ, ընտանեկան քաղցր կապե-
րու խզում, ժողովուրդին ատելութեան ժահը
թուք և անպատուութիւն կարգաւ ճաշակեցին
մեր հայրերը: Կրեցին թոնարարման փորձեր,
խղճի, զգացումի, ստացուածքի և անձնական
պատուութեան: Ենթարկուեցան անգութ բանա-
դրանքներու որոնցմով սիրոյ և բարեկամու-
թեան հետ բարեւը, հացն ու ջուրն իսկ կը վեր-
ցուէին անոնցմէ: Եանթահարուեցան պատրի-
արքէն անէծքներով և դուրս ձգուեցան Աս-
տուծոյ տունէն և ժողովուրդէն:

Սակայն եկեղեցին ունէր խաչին տեսիլքը,
Հոսէր որ դուռեցաւ և փորձուեցաւ անոր հաւատ-
քին և գործերուն պատուականութիւնը: Զգա-
ցում, թեթեւութիւն, չափանդութիւն, կայ
նման պախարակելի դրդապատճառներ որոնք
յաճախ կը վերագրուին մեզի, չէին կրնար ապ-
րիլ նմանօրինակ մթնոլորտի մը մէջ: Մեր հայ-
րերը չսիրեցին իրենց անձերը, յօժարութեամբ
ընդունեցին Քրիստոսի նախատինքը իրենց ըս-
տացուածքներուն կողոպտուիլը, բռնի հակա-
ռակութեան մէջ դաւանեցան Քրիստոսը, յօժա-
րեցան տեսարան ըլլալ հրեշտակներուն և մար-
դոց առջեւ ի սէր ճշմարտութեան: Աստուած
գործածեց հալածանքը դտելու և ամբողջելու
անոնց խանդը, և սորվեցուց անոնց օր ըստ օրէ
ապաւինելու Աստուծոյ անպարտելի զօրութեան:

Զարմանալի է տեսնել թէ ինչպէս Աստուծոյ
շնորհիւ ու նախախնամութիւնն ալ գործեցին
ի նպաստ իրենց: Անոնք իրենց տառապանք-
ներուն մէջ քանիցս վայելեցին հայրական պաշտ-
պանութիւն: ազատեցան բիւր փորձութիւններէ
Տեսան կարգ մը հակառակորդներու դարձեալ
կամ պատժուիլը, ականատես եղան Աստուծոյ
միջամտութիւններուն տնտեսական և ընկերական
օրէնքներու փոփոխութեանց մէջ: Շատ անգամ
Տէրը «հզօրէն անուշ հանեց» մեր հայրերուն հա-
մար: Հալածանքի շրջանը, ցաւի և արցունքի
հետ, նուիրման և զօրութեան օժուժ մ'ալ կը բե-
րէր մեր հայրերուն կրկնելով տառապեալ Պօղոս
առաքեալի աննման փորձառութիւնները «իմ
շնորհքս հերիք է քեզի»:

Անտարակոյս նմանօրինակ պատճառներ և
ապրումներ բա՛ւ են մեզ բացատրելու մեր հարց
խանդին ու զօրութեան գաղտնիքը: Հարկ չկայ
այլ բացառիկ տուեալներ որոնելու: Այս պարզ
և տարբական ապրումներն քաջալերական են
անոր համար ալ որ անոնք հեռու չեն մեր հա-
ստելութենէն, և մեր հաւատարմութեան չափով
մեզի եւս կրնան բերել նոյն օրհնութիւնները:

Բ. հարիւրամեակի մը արշալոյսին մենք
զմեզ կը գտնենք շատ ճակատագրական շրջանի
մը մէջ:

Մեր արտաքին պայմանները, քաղաքական
կացութիւնը, հայութեան վիճակը, մեր եկեղե-
ցիներուն ինքնայատուկ և իրարու աննման
կացութիւնները կը ստեղծեն այնպիսի բարդ հար-
ցեր և դժուարութիւններ, որոնք լրջօրէն խոր-
հիլ կուտան առաջնորդող տարրը: Շատերու
մանաւանդ մեծ ցաւ է տեսնել որ բաւական
թմրութիւն և անհաւատարմութիւն կայ հայ
Աւետարանական եկեղեցիներու մէջ: և բաւա-
կան շեղում մեր հայոց հաւատքէն ու բարեպաշ-
տութենէն:

Սակայն մենք իրաւունք չունինք պարտե-
լու տկարութիւն և մեղք, թմրութիւն, անհա-
ւատարմութիւն, անգոր ու անբերրի կեանք:
Չունինք իրաւունքս վասնզի ոչ միայն ժառան-
գորդներն ենք հոգեւոր գանձերու, այլ նաև անց-
եալ հարիւր տարուայ ընթացքին առիթ ունե-
ցած ենք ընդարձակելու և խորացնելու մեր ժա-
ռանգութիւնը: Տիրացած ենք նոր լոյսերու և
փորձառութեանց, օգտուած ենք Տիեզերական
Եկեղեցիին շնորհուած օրհնութիւններով, ըն-
դունած ենք Սբ. Հոգւոյն այցը պարբերական
մեծ և փոքր արթնութիւններով, օգտուած ենք
Աստուծոյ բազմաթիւ օգտակար ծառաներու
կեանքէն ու վկայութենէն և բազում միսիոնա-
րական ձեռնարկներէն: Շատերս ականատես վը-
կաներ եղած ենք այդ օրհնութիւններուն:

Ուրեմն եզած են շրջաններ, երբ մենք եւս
Աստուծոյ շնորհքով ունեցած ենք մեր հայրերուն
եռանդն ու զօրութիւնը: Այսօր թերեւս զուրկ
ենք այդ կենսունակութենէն: Սակայն Տէրը
միշտ կարող է իր գործը վերակենդանացնելու
մենք ամուր բռնենք մեր ունեցածը, հաւատարիմ
մնանք շնորհաց պարզ միջոցներուն: Անկեղծ
հոգեւորութեան տէր և Աստուծոյ խօսքին հաւա-
տարիմ պաշտօնէութեան եւ եկեղեցիներու՝ Աստ-
ուած միշտ պատրաստ է շնորհել իր Հոգւոյն այցը:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս հասուածը առնուած է Վեր Հասիսէն Նի Պէյրուքի ձայնասփիւռէն խօսած ճառէն .
Անոր հաւատքը

1. Հայ Աւետ. Եկեղեցին կը հաւատայ որ հին Ուխտին Յիսուս Քրիստոսի գալովը կատարելագործուած է և անով սկսուած է Նոր Ուխտին: Քրիստոս ըսաւ « Եւ չեկայ օրէնքը կամ մարդարէնները աւելելու, հապա կատարելու » Մատթ. Ե. 17: « Քանզի օրէնքին վախճանը Քրիստոս է ամէն հաւատացեալի արդարութեան համար » Հովմ. Ժ. 9:

Ուրեմն օրէնքը մեր դաստիարակը եղաւ մեզ Քրիստոսի բերելու, որպէսզի մենք հաւատքով արգարանանք: Բայց երբ հաւատքը եկաւ, ալ դաստիարակի տակ չենք: Գաղ. Բ. 24:

« Նոր Ուխտ ըսելով առաջինը հինցուց, և այն որ կը հիննայ և կը ծերանայ, ալ կորուստի մօտ է » Եբր. Ա. 13: « Բայց հիմա Յիսուս ալ լաւագոյն խոստումներով հաստատուած լաւագոյն ուխտի մը միջնորդն է »:

Ինչ է Նոր Ուխտը. « Ոչ թէ այն ուխտին պէս գործնողն հայրերուն հետ ըրի. այս է այն ուխտը, կ'ըսէ Տէրը. Իմ օրէնքներս անոնց մօտին մէջ պիտի գնեմ և անոնց սրտին վրայ պիտի գրեմ զանոնք և անոնց Աստուած պիտի ըլլամ և անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան »: Եբր. Ը. 9. 10:

Տար Աստուած որ հարիւրամեակի հանդիսութիւնները միջոց ըլլային թարմ գիտակցութեան մը բերելու մեր եկեղեցիները. կենդանի Փրկչէն ստանալու ոչ միայն մեր հայրերը կենդանացնող եռանդն ու ուժը այլ թարմ շնորհք եւ ուժ մեր նոր պարտականութիւններուն համար:

Այս օրերը տօնախմբութեան եւ ցոյցերու հետ, կրնան նաեւ անձնաքննութեան եւ խոնարհեցման օրեր ըլլալ թէ կորսուած ժառանգութիւնը վերստանալու, թէ ալ, եթէ ուզենք այլ այսօրուայ Եզիսէներու վրայ իջեցնելու Եղիսնեբու կրկնապատիկ հոգին:

Տրուած Մարտիրոսի Միութեան ժողովին

4 Յուլիս 1946

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Քրիստոս հին ուխտի լրումն է. օրէնքի լրումը սէր է: Այլեւ մեր քահանայապետը, մեր ուխտի տապանակը, մեր խորանը, աշտանակը, առաջաւորաց հացը, պատարագը Քրիստոս ինքն է, և անոր կեանքի օրէնքը սէրն է: « Քու Տէր Աստուածդ սիրե՛ր բոլոր սրտովդ . . . և քու ընկերդ քու անձիդ պէս » Մատթ. ԻԲ. 29-31:

2. Հայ Աւետ. Եկեղեցին կը հաւատայ որ փրկութեան համար միայն մէկ միջնորդ կայ, այն ալ մեր Փրկիչը Տէր Յիսուս Քրիստոս է: « Քանզի մէկ Աստուած կայ ու մէկ միջնորդ Աստուծոյ ու մարդոց մէջտեղ, Քրիստոս Յիսուս մարդը, որ իր անձը ամենուն տեղ փրկանք տրուաւ » Ա. Տիմ. Բ. 5-6:

Մենք խորհուրդ չունինք. Աստուածային շնորհքը տեսանելի, նիւթական բաներով մեզի չի հաղորդուիր: Մէկ խորհուրդ ունինք, խորհուրդ մեծ և սքանչելի, այն Յիսուս ինքն է, որ հին ուխտի վարագոյրը պատռեց և յայտնուեցաւ և սրբաբանի նոր ճամբան բացաւ և մենք ուղղակի նոր ճամբայէն կը մտնենք Աստուծոյ ներկայութեան և մեղքերու թողութիւն կ'առնենք Յիսուսի արիւնով:

3. Հայ Աւետ. Եկեղեցին կը հաւատայ որ, Ս. Գրիգորն է միակ կանոնը եկեղեցւոյ հաւատքի և կեանքի: Ս. Գրքի ուսումնասիրութիւնով և անոր պատուէրներուն հնազանդելով է որ հոգեւոր կեանքը կը դարգանայ:

4. Հայ Աւետ. Եկեղեցին կը հաւատայ որ ճշմարիտ եկեղեցւոյ անդամակցութեան միակ միջոցն է Քրիստոսի հաւատալ, ապաշխարութիւն և վերստին ծնունդ: Աւետարանական Եկեղեցին կը հաւատայ կեանքի ներքին փոփոխութեան: Ս. Հոգին մեղաւոր սրտին մէջ գործելով գայն կը համոզէ մեղքի, արգարութեան և դատաստանի մասին և հոն նոր կեանք յառաջ կը բերէ, վերստին ծնունդ: Ս. Հոգին միջոցաւ մարդուն բնութիւնը կը նորոգուի փառացի փառս Յիսուսի պատկերին և աշխարհի մէջ սուրբ կեանքը իրական կ'ըլլայ, Սիմոն Պետրոսի, Որոտման որդի՝ սիրոյ որդիներու, Սօզոս Պողոսի կը փոխուի:

5. Հայ Աւետ. Եկեղեցին կը հաւատայ Աստուծոյ թագաւորութեան յաղթանակին և ատոր

համար իր կոչումն է Աւետարանչութիւն։
« Գացէք, աշակերտեցէք, սորվեցուցէք... »:

ԱճՈՐ ՍՈՑԱԿԱՐՈՒՄԻՆԵՐ

Երկրորդ Հայ Աւետ. Եկեղեցին ինչ օգտակարութիւն ունեցած է Հայ Ազգին. թուով քիչ, բայց օգտակարութիւն շատ ունեցած ենք:

1. Աստուածաշունչի աշխարհաբառ թարգմանութիւնը. Աւետարանական ժողովուրդը իր հասկացած լեզուով Ս. Գիրքը և զորիչ հոգեւոր գիրքեր ունեցած է: Ասով աշխարհաբառը մաքրագործուած և ընդհանրացած է:

2. Կրթութեան զարգացումը արական և իգական սեռին մէջ: Մանաւանդ աւետարանական սկզբունքներով կրթական մակարդակը բարձրացած է և հոգեւոր գրականութիւն յառաջ եկած է:

3. Հայ Աւետ. Եկեղեցին ընտանեկան կեանքի նշանակութիւնը բարձրացուցած է և ընտանիքը իբր Ստուծոյ տաճար հռչակած է: Ընտանեկան ազօթքի ուժ տալով ընտանիքը եկեղեցիի վեռածած է:

4. Հայ Աւետ. Եկեղեցին հոգեւոր և բարեսիրական նպատակներու համար կանոնաւոր կերպով տալը շնչած է:

5. Կիրակին Քրիստոսի Յարութեան և Սուրբ Հոգիին Գալստեան օրը ըլլալով, Հայ Աւետ. Եկեղեցին առեւտուրը կ'արգիլէ այդ օրերը և կիրակի օրը կը հռչակէ Տէրունական օր, թէ մարմնի հանգստութեան և թէ հոգեւոր կեանքի մէջ զարգացման համար:

6. Հայ Աւետ. Եկեղեցին թէ հոգեւոր պաշտօնեաներու և թէ ժողովրդեան կեանքի ժուժկալութեան և սրբութեան շատ կարեւորութիւն կուտայ, ոգիլից ըմպելիներ չգործածել, չծխել, գայթակղալից զուարճութեանց վայրեր չյաճախել և խրախճանութեանց մէջ անվայել վարմունք չունենալ:

ԱՆՈՐ ԿՈՅՈՒՄԸ

Երրորդ. Հայ Աւետ. Եկեղեցին ինչ կոչում ունի ապագային համար:

Ա. Գիտնալով որ Հայ Աւետ. Եկեղեցւոյ ծագումը մերազգին մէջ նախախնամական է, պէտք է անոր սկզբունքներուն և աւանդներուն հաւատարիմ ըլլալ. այսինքն. Ս. Գիրքը ամէն օր

ՀՐԱՅՐԲ ԵՒ ԱՂՈԹԲ

Եկեղեցին Յիսուսի կեանքին վերջին շաբաթը Հրայրքի կամ Աւագ շաբաթ յորջորջած է: Մեծ էրայդ շաբաթը, մեծ էր և մարտակոչը որ առաջնորդեց տառապանքի ստակագոյն տեսակներուն ապերախութեան բոցի, սիրելիներէ բաժանման եւ ֆիզիքական սոսկալի տանջանքի:

Նկատենք թէ Նոր Կտակարանը նմանցուած է չորս սրենբու վրայ կառուցուած տաճարի մը որուն մէկ սրենբ « Յովհաննու Աւետարանը » շէնքէն զուրս դէպի երկինք կը բարձրանայ իբր աշտարակ: Տաճարին գմբէթը Գործք Առաքելոցն է. գմբէթին բոլորսիքի գունապեղ պատուհանները Յայտնութեան Գիրքը. պատուհաններէն

սերտել, ամէն օր առանձնական ազօթք ընել, կիրակին ուրբ պահել, ընտանեկան ազօթքի կարեւորութիւն տալ, եկեղեցիի պաշտամունքն և բուն կանոնաւոր ներկայ գտնուիլ ազօթածողովներուն յաճախել, հոգեւոր նպատակներու մեր նուէրները առատաձեռնօրէն տալ, եղբայրական միութեան հոգին զօրացնել և ժուժկալ կեանք մը ապրիլ:

Բ. Հայ Աւետ. Եկեղեցիներու հաւատալիքին եւ սկզբունքներուն զիտակից ըլլալով պէտք չէ ամչնանք աւետարանական անուանումէն: Իբր Հայ Աւետ. Եկեղեցիի զաւակներ մեզի պարծանք ըլլալու է Քրիստոս եւ իր Աւետարանը, մենք ազգայնամոլ չենք, բայց քրիստոնէական ազգասիրութիւնը կը հետապնդենք. մենք կրօնամոլ չենք, բայց Քրիստոսի սէրը մեզ կը ստիպէ:

Գ. Գիտնալով որ Հայ Աւետ. Եկեղեցիի կոչումը աւետարանչութիւն է, պէտք է խօսքով եւ կեանքով աղեւ լոյս ըլլանք մեր շրջանակին, մեր ազգին եւ բոլոր աշխարհի: Մանաւանդ որ դէպի հայրենիք ներգաղթը սկսած է, մենք մեր նախահայրերէն մնացած աւանդները պահելով հայրենիքի մէջ, թէ բանդուորական, թէ առեւտրական, թէ կրթական եւ թէ եկեղեցական մարդկն մէջ, մեր գործնական կեանքով փրկութեան պատգամը առանց վախի տալու ենք:

Թէ Հայ Առաքելական եւ թէ Հայ Աւետարանական եկեղեցիներու կոչումը այս է:

ՎԵՐ. Ե. ՀԱՏԻՏԵԱՆ

կախուած մեծ ուժով զանգակները՝ թուղթերը, որոնք իրենց զօղանջիւններով, սակայն ներգաշնակօրէն մարդիկ նոյն ճշմարտութեան կը հրաւիրեն: Այս ամբողջութեան մէջ, Յովհաննէս Առաքեալ իւր առ Յիսուս ունեցած մեծ սիրոյն պատճառաւ «Անոր հասակին լման չափին ամենէն շատ մօտեցող անձն էր: Անոր շատ նմանելուն պատճառաւ նոյնիսկ մատնութիւնը հարկ եղաւ, սխալ մէկը չձերբակալելու համար: Ան «ընկերակիցն էր Յիսուսի նկուղիները, համբերութեանը եւ արքայութեանը» Յայտ. Ա. 9: Իր Աւետարանն ու թուղթերը Յիսուսի հոգիովը եւ սիրովը ծծուն են: Ան բաց աչքերով փառքը տեսաւ:

Բայց տաճարին գմբէթը երկն է «Հրայրքով լեցուն» երկու ճարտարապետներուն՝ Պօղոսի եւ Պետրոսի: Գործք Առաքելոցը Նոր Կտակարանին լրութիւնն ու թագն է: Պօղոս Առաքեալ չէր պակսեր սիրոյ եւ խանդաղատանքի մէջ «Ով կը գայ թակղէր եւ անոր սիրտը չէր այրեր»:

Ժողովուրդը նոյնպէս միւս առաքելոց համարձակութեանը վրայ կը դարձանար, մինչեւ իմանար որ Յիսուսի հետ էին անոնք: Խնդիրը հաս կընայի կ'ըլլար այլեւս:

Ու մենք: Ինչ պիտի պաշտէինք այսօր դուն եւ ես առանց Պօղոսի եւ անոր նման յանգուզն քարոզիչներուն «Խելաածներուն» քարոզչութեանը:

Կասկած չկայ թէ Եւրոպայի եւ Ասիոյ եկեղեցիներէն շատեր ծագում առին Զատիկի տօնին առթիւ Երուսաղէմ գացող ուխտաւորներու Յիսուսի խաղաղանք տեսնողներուն միջոցաւ:

Եղիա պիտի լսէր մեղմ ձայնը, եթէ հովը, փոթորիկը եւ երկրաշարժը զինքը չսթափեցնէին իր յուսալքութեան թմբիւրէն:

Աշխարհի մարդիկ անիրաւութեան դառնութեամբ արբած կարող չեն նկատելու սուրբ դէմքերը, սիրագեղ նայուածքները: Հոգեւոր ճշմարտութիւնները «Ջուրի ձայն» կը հնչեն: Աստուծոյ տունը կը պարպուի, իր պաշտօնեաները կը յուսալքուին, կը մարտիրոսանան, կը պակսին: Զարթոնցիչ ազդակներ, ցնցիչ ձայններ, ելեկտրականացնող ուժեր պէտք են: Յանդուգն եւ խաղաղանով քրիստոնեաներ կ'ուզուին, որ վերէն զօրութիւն եւ իշխանութիւն առած՝ նախ ինքզինքնին խաղաղանեն եւ յետոյ՝ ամէն ինչ որ Աստուծոյ գործին ճամբուն դէմ ելլէ:

Մեր հայրերը «հոգիով բորբոքած Տէրոջը ճա-

ԱՌԱՋԻՆ ԲԱՆԵՐԸ

Տէր Յիսուս իր վարդապետութեան մէջ առաջին տեղը կու տայ այնպիսի բաներու որոնք մենք մահկանացուներու կամ բոլորովին զանց առնելու եւ կամ վերջին տեղը տալու հակամէտ ենք: Զորս մասնայատուկ պարագաներու մէջ Ան այս «Առաջ» բառը գործածեց, որոնք բոլորն ալ Մատթէոսի աւետարանին մէջ կը գտնուին:

1.— ԵՂԲՕՐԸ ՀԵՏ ՀԱՇՏՈՒԻՆԼ. (Մատթ. Ե. 23-24) Եթէ եղբայրդ քեզի դէմ բան մը ունի գնա, անոր հետ հաշտուէ: Եթէ դուն եղբորդ դէմ բան մը ունիս՝ անոր ներէ: Մարկ. ԺԱ. 25: Հոս գլխաւոր, կենսական, յաւիտեանական կարեւորութիւն ունեցող կէտը այն է որ մենք Աստուծոյ հետ հաղորդութիւն չենք կրնար ունենալ. եթէ մեր եղբոր հանդէպ մեր դիրքը եւ սիրտը շիտակ չէ: Այո, եւ Աստուած մեզի մեր մեղքերը չներեր եթէ մեր սիրտերէն չենք ներքեր ամէն մէկս մեր եղբոր իրենց յանցանքները Մատթ. ԺԸ. 55:

2.— ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ԽՆԴԻՆԸ. Մատթ. 2. 33 տեսնել նաեւ փիլ. Գ. 12. Ա. 21, Բ. Կոր. Ե. 15, Հռով. ԺԲ. 1, 2:

Նիւթական բաներու համար հոգ ընել կամ չընելը կախում չունի նիւթական պայմաններէն, ինչպէս հարստութիւն, աղքատութիւն, նոյնիսկ անգործութիւն, պարտքի տակ ըլլալ եւ այլն: Հապա անոնք որ լման նուիրումով Տէր Յիսուսի

ոայեցին: Մեզի ծանօթ քրիստոնէութիւնը ուրիշ ճամբայ մը չունի: Հրայրքով եւ աղօթքով հասաւ մեզի այս թանկարժէք աւանդը: Ի՞նչպէս պիտի յանձնենք զայն յաջորդ դարուն եւ յաջորդ սերունդին: Հրայրքով աղօթողը եւ աղօթքով կերտողը քրիստոսի դրօշակիրն է: Այդ դրօշակրութիւնն ընենք:

Մարդկութեան հետ հայութիւնն ալ հոգեւոր մարդին մէջ ամէն բանէ յուսախաբ ծովուն փրփուրէն օգնութիւն կ'ակնկալէ: Հողը պատրաստ է: Պայմանները յար եւ նման են Անոր առաջին գալստեան ատենին երկու հազար տարի առաջ:

Խաչակրութիւնը սկսելու ատեն է:

«Ո՞վ յօժար է պատասխան տալ, «հոս եմ ես», Տէր»:

Հայ Աւետ. Եկեղեցի

Նիւ - Եօրք

ՄԱՐԻԱՍ՝ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

կը դոճուին՝ նիւթական հոգերէ կ'ազատին, թէեւ անօթի ալ մնան:

3.— ԱՌԱՋ ՔՈՒ ԱԶԳԻԴ ԳԵՐԱՆԸ ՀԱՆԷ. Մատ Է. 5.

Հոս հարցը իր եղբայրը դատելու վրայ է: Բայց այս դատելը որոշ դատելի արարքներու և յանցանքներու դատելը չէ, ինչպէս Մատթ. Է. 15 ԺԸ. 15-18, Ա. Կոր. Ե. 1-5, 12, 13, Ա. Տիմ. Ա. 20 հապա չսեպնուած կամ խորհուրդներով եղած դատելը. Հոով. ԺԴ. 3-13 Ա. Կոր. Դ. 5, Ա. Կոր. ԺԴ 5ի չարութիւն խորհելով՝ դատելը. որուն դէմ Առաքեալը կ'ըսէ. «Մէրը չարութիւն չխորհիր»:

Հաւատացեալը նախ ինքզինքը դատելու է գերանի խստութեամբ, իսկ իր եղբայրը շիւղի մեղմութեամբ: Այսպէս ըսենք, առաջ ինքզինքը գերանով ծեծելու է, և յետոյ ի հարկին. իր եղբայրը շիւղով մը:

4. Առաջ գաւաթին ու պնակին ներսի կողմը մաքրէ, (Մատթ. ԻԴ. 25, 26) Որպէսզի անոնց գոլերսի կողմն ալ մաքուր ըլլայ:

Առաջ ներսը և յետոյ նաեւ դուրսը:

Առաջ սիրտդ և յետոյ ձէսերդ:

Առաջ Աստուծոյ տեսածը և յետոյ մարդոց ցուցադրածը:

Ասոր հակառակը ընողները՝ Քրիստոսի արտայայնած Ութը «վայ»երուն տակ կ'իյնան. (Մատթ. ԻԴ. 13, 14, 15, 16, 23, 25, 27, 29)

Մի խաբուիք, Աստուծոյ ծաղիկ չըլլար: (Վեր.) Վ. Ս. (հետեւողութեամբ)

ԻՆՉՊԷՍ ՍՈՐՎԵՑԱՅ ՀԱՒԱՏԱԼ

1885 ի Հոկտեմբեր ամսուան մէջ օր մը հայրիկիս գրասենեակին մէջ նստած իր նամակնիւրը կը գրէի: Հայր՝ պատուելի էր: Դուռը դարձնուեցաւ եւ աղքատիկ երեսոյթով մարդ մը ներս մտաւ. — «Ես դերձակ եմ եւ ձեր թեմին կը պատկանիմ ըսաւ, այսօր տան վարձքի պայմանաժամ է, ճիշդ կէսօրին տանտէրս պիտի ներկայանայ 50 ֆրանք վարձք պահանջելու եւ ես մէկ սուղունիմ, անգործութիւնը զիս դժնդակ անելի մը մէջ ձգեց»:

Մինչ հայրս քսակը կը հանէր, մարդը զայն կեցուց և շարունակեց «Ձեզմէ ողորմութիւն ուզելու չեմ եկած բայց 50րդ Սաղմոսին մէջ կարդացի Աստուծոյ այս բացայայտ այտարարութիւնը» —

Նեղութեան օրը ինձի կանչէ. ես քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես:

Ես հաւատարմաբար կանչեցի Աստուծոյ. կը հաւատամ թէ ան լսեց և ինձի պիտի պատասխանէ. բայց ինչպէս չեմ գիտեր. եկած եմ ձեզմէ խնդրել թէ ինչ կը թելադրէք որ ընեմ:

«Հաւ ուրեմն» պատասխանեց հայրս համեստօրէն. «Մէկ ժակ եւս սպասեցէք ու պիտի տեսնէք»:

Դերձակը մեկնեցաւ: Հայրս շարունակեց ինձ իր նամակները գրուցադրել: Երեք քառորդ ժամ անցաւ այսպէս մինչ ես հեռաքրքրութենէս աւելի յաճախ պատէն կախուած ժամացոյցին սլաքներուն կը նայէի. հայրս նկատելով զայս «պիտի ուղէի՞ր գիտնալ թէ ինչ պատահեցաւ դերձակին» հարցուց, եւ երկուքս միասին դուրս ելանքանոր թողած հասցէին երթալու:

Աղքատ փողոցի մը ցածիկ տուններէն մէկուն դուրսի դրան առջեւ, գետին փռուած անկողնի մը վրայ հիւանդ կին մը երկնցած էր շրջապատուած մանուկներէ որոնք կաւային, իներձակը շատ համեստօրէն տունին վերջի կարասիները դուրս կը հանէր, մինչ չէր դադրել ցած ձայնով կրկնել. «Նեղութեան օրը ինձի կանչէ ես քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես»:

Ժամացոյցիս նայեցայ կէսօրուան 3 վայրկեան մնացած էր: Մատիկ յուզուած հօրս երեսը նայեցայ. նոյն վայրկեանին բարեկեցիկ զգեստով և խաղաղութիւն ու բարութիւն արտայայտող դէմքով կին մը հօրս մօտեցաւ ու ըսաւ. Պատուելի որքան ուրախ եմ հոս ձեզի հանդիպելու. այս առտու ամուսինս գրասենեակ երթալէ առաջ ինձի ըսաւ. — «Այսօր վարձքերու պայմանաժամի օր է, տեղ մը անշուշտ խեղճ ընտանիք մընեղ կացութեան մէջ գտնուելու է. այս երեք հատ 50 ֆրանքնոց թղթադրամները պատուելիին տար, անիկա անշուշտ կը դիմնալ հարկ եղած տեղը տալ:

Մինչ կ'ընէր պահարանը հօրս կ'երկնցնէր, հայրիկս ըսաւ. «Ինձի մի տաք տիկին, հապա եթէ կը հաճիք — դերձակը ցուցնելով — այս մարդուն տուէք գրամը»:

Երբ մարդը պահարանը առաւ, նախ դէմքը տփուկեցաւ յուզումէն, բայց անմիջապէս յետոյ ուրախութեամբ պայծառացաւ և գոչեց. — «Նեղութեան օրը ինձի կանչէ, կ'ըսէ Տէրը, ես քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես»:

Այդ օրը ես սորվեցայ թէ ինչ կը նշանակէ ՀԱՒԱՏԱԼ:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

Որպէսզի մենք ապրինք ազատ,
Հաւատքի մէջ անկաշկանդ,
Խղճով մաքուր անբռնադատ,
Պաշտամունքով արգաւանդ,
Հայրերը մեր կազմակերպեալ
Բռնութեան դէմ դարաւոր,
Բացին իրենց պայքարն օրհնեալ
Դիւցադնութեամբ փառաւոր:

Որպէսզի սուրբ Աւետարան
Բացուի ամէն յարկի տակ,
Վերածնունի ազգը համայն
Տէր Յիսուսի խաչին տակ,
Հայրերը մեր յօժարեցան
Ամենաւառն արցունքի,
Բիւր ցաւերու եւ անսահման
Նախատանաց ու վերքի:

Հարիւր տարուայ լոյսը ոսկի
Մեր հայրերուն տեսիլքին. . .
Հարիւր տարուայ հունձքը ոսկի
Մեր սուրբերուն քրտինքին. . .
Հունձքն է դարձած մեր երգին տակ
Արքայութիւն երկնքի,
Լոյսն է դարձած պէրճ արեգակ
Աստուածայայտ նոր կեանքի:

Սուրբ հայրերու մենք հարազատ
Անշեղ սեփունդ ու ժառանգ,
Կ'ուխտենք պահել միշտ անարատ
Անոնց հաւատքն ու սուրբ կեանք:
Աստուածաշունչն «կենաց կանոն»
Ըրին մեր հարք սրբազան,
Մենք ալ կ'ընենք «փառաց պաշտօն»
Զայն հռչակելն անվարան:

Այսօր տօն է օրհներգութեան,
Օր փառապանծ տեսիլքի.
Օր է ուխտի, Օր նուիրման,
Օր պայքարի ու փառքի. . .
Սիրելի կ'ուզենք արդեօր պէս
Ընկերոջ հետ թշնամին,
Ու ծառայել մեր փրկչին պէս
Ազգին եւ ողջ աշխարհին:

Երուսաղէմ Մայիս 1946.

ՍԱՄՈՒԷԼ Գ.



ԳՐԻԳՈՐԸ

«Այսուհետեւ երանելի են
այն մեռելները որոնք Ցե-
րոյ մով կը ննջեն»:

Յայտ. ԺԿ. 13

Գրիգոր այս երանութեան արժանացաւ,
Անոր մահը տխուր անակնկալ մը եղաւ իր ըն-
տանիքին համար, ինչպէս նաեւ մեր եկեղեցի-
ին եւ բոլոր գաղութին համար:

Գրիգոր յայտարարեց թէ փոթաս պա-
րունակող ջուր խմած էր, որուն հետեւանքով
աղիքները այրած ըլլալով բժիշկներու խնամք-
ները ապարդիւն մնացին:

Բ. շաբթի 15 Ապրիլին ի Տէր նշեց սիրելի
Գրիգորը, յաւէտ իր Փրկչին հետ ըլլալու հա-
մար: Բոցավառ և անոյշ աչքերով. շիկնոտ նա-
ուածքով պատանի մըն էր ան, նաեւ սակաւա-
խօս: Ան ալ սկսած էր շոյիլ ժամանակիս երի-
տասարդութեան աշխարհը վայելելու խելայեղ
փափաքը իր մէջ: Քիչ կը խորհէր ան մահուան
վրայ, ինչպէս շատ մը երիտասարդներ:

Մահէն մէկ օր առաջ կիրակի առաւօտ այ-
ցեղեցի իրեն, ուրախ կ'երեւէր, կը թուէր թէ
վտանգը անցած էր: Խօսակցեցանք, աղօթեցի,
եւ կը պատրաստուէի մեկնիլ, երբ ինքն ալ
սկսաւ աղօթել, անակնկալի բերելով եւ միան-
գամայն ուրախացնելով զիս:

Այո՛, Աստուած այդ շնորհքը ըրաւ իրեն,
պատեհութիւն տալով ապաշխարելու, Յիսուսը
իրբեւ փրկիչ ընդունելու:

Իմ այցելութենէս առաջ, մեր քոյրերէն
մէկուն ներկայութեամբ կ'աղօթէ, «Սիրելի Յի-
սուս, ներէ ինծի իմ բոլոր չարութիւններս, կը
զղջամ, ներէ ինծի: Ես կը հաւատամ որ ալ Քու
զաւակդ եմ, եւ կը խոստանամ, երբ որ կամե-
նաս զիս բժշկել, ինձ նման չար ընկերներս փեղի
առաջնորդել»:

Ասկէ վերջ իր քով եկողներուն կը վկայէ
համարձակութեամբ: Կը մխիթարէ իր մայրը,
ըսելով «մամա, մի նեղուիր ինծի համար, ես Յի-
սուսի քով կ'երթամ, իսկ եթէ Տէրը կամենայ
որ աղէկնամ, քու բոլոր փափաքներդ պիտի
կատարեմ»:

—Ինչ է իմ փափաքս որդիս, կը հարցնէ մայրը:

—Որ բոլորս ընտանեօք Տէրոջը տունը երթանք, կը պատասխանէ Գրիգոր:

Այո՛, այդ էր մօրը փափաքը, Գրիգորի հոգևոյն համար հառաչող և աղօթող մօրը—նուարդ քրոջ փափաքը: Գրիգոր այդ դիտէր, և շատ քիչ անգամ կատարած էր այդ փափաքը: Հիմա Գրիգոր կ'ուզէ ուրախացնել իր մայրը, ատկէ առաջ իր Փրկիչը ուրախացուցած ըլլալով: Ժպիտը շրթներուն, պտկած, ուրիշ քրոջ մը նոյն բանը կը կրկնէ, «մօրս հետ Տէրոջը տունը պիտի երթանք», . . .

Մահուան մօտիկ, Գրիգոր տեսաւ երկինքի փառքը — «Ո՛հ մա՛, ի՛նչ աղուոր տեղ է երկինքը, թող որ երթամ, ուրախ եղիր քու աղօթքներդ լսուած են, ես ա՛լ Տէր Յիսուսի՝ զաւակն եմ: Ըսով, շատ շուտով կ'ուզեմ իր քով երթալ: . . . այո, աղօթէ մամա՛ որ Աստուած շուտով դիտ իր քով տանի . . . ալ զգուած եմ աշխարհէն, ալ կը գանիմ աշխարհէն, կեանքէն, պարա՛պ, ու՛նայն է եղեր: Ա՛խ ծարաւ եմ . . . երբ պիտի երթամ ու Աստուծոյ աթոռին տակէն բխող պաղուկ ջուրէն: Ահա՛ հրեշտակներ եկան, Յիսուս ալ եկաւ . . . Ով Տէր, ծարաւի եմ Քու արդարութեանդ. . .

Ահա ապոնք եղան Գրիգորի վերջին խօսքերը:

Յուդարկաւորութիւնը կատարուեցաւ Զորքշարթի 17 Ապրիլ: Նախորդ օր արդէն Գրիգորի մարմինը փոխադրուած էր Կարտանի Հայ Աւետ Եկեղեցւոյ սրահը:

Արարողութիւնը յայտարարուած էր ժամը 4ին, սակայն ժամը Յին արդէն սրահը լիցուած էր: Վեր. Զ. Ք. Պուտաքեան խօսք առնելով ընդգծեց թէ ինչ էր մարդուն զիրքը անկուսէն առաջ եւ թէ մեղքը մարդս մահուան իշխանութեան տակ դրաւ, այսպէսով մահը դարձաւ անուժելի բան մը որուն պարտին ենթարկուիլը ուրիշ մեծ եւ պզտիկ, հարուստ եւ աղքատ: Սակայն Աստուած իր միածին Որդին զրկեց որպէսզի մեզի յաւիտենական կեանք տայ:

Վերապատուելիէն վերջ խօսեցաւ տեղւոյն քարոզիչը, կարդաց նաեւ վերեւ յիշուած Գրիգորի վերջին խօսքերը: Ապա երկսեռ երիտասարդութիւնը դադարին շուրջ հրգեց բաժանման երգ մը, որմէ վերջ մարմինը փոխադրուեցաւ գերեզմանատուն, ուրտեղ վերստին խօսեցան Վեր. Զ. Պուտաքեան եւ Պատ. Սէն, հրկուքն ալ կոչ ըրին

ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐԸ

(Սոյն յօդուածը գրուած է 1938 ի սկիզբները ուրեմն պատերազմէն առաջ, սակայն ներկայ պարագաները կը ցուցունեն թէ հեղինակին տեսութիւնները որքան իրականութեան կը վերածուին):

Երբեմն կը մոռնանք թէ Երուսաղէմ հոգեւորապէս աշխարհի կեդրոնն է և զայիքին երթալով աւելի այսպէս պիտի ըլլայ, վասնզի «ամէն ազգերը հոն . . . պիտի ժողովուին» Հոս է որ Արեւելքը և Արեւմուտքը զիրար կը դիմաւորեն:

Ուստի պէտք է յիշենք թէ աշխարհի բոլոր ստեղծուածները որ մեր առջեւ կը կենան, անոնցմէ ոչ մէկը աւելի կարեւոր է որքան «Հրէական հարցը» այն պարագաներու զուգարկուածութեամբ որոնք կը կապին զմեզ մեր Տէրոջը և Փրկչին Յիսուս Քրիստոսի երկրորդ զաւստեան:

Կառավարիչները ինչպէս նաեւ կառավարուողները կը վիճին և կը խօսին մերկալից և խռովեալ ժամանակներուն մասին որոնց մէջ ներկայիս կ'ապրինք: Խռովեալ ժամանակներ արեւմտեան երկիրներու մասնաւորաբար Գերմանիոյ, Իտալիոյ և Սպանիոյ մէջ. Ռուսիոյ մէջ, Կեդր. Եւրոպայի տէրութիւններու նաեւ Արեւելքի մէջ ուր յատկապէս երկու դեղին մեծ պետութիւնները եղբայրասպան կսիւի մը ձեռնարկած են:

Բայց այնպէս կը թուի թէ շատ քիչեր կարեւորութիւն կուտան ինչ որ կ'անցնի հրեաներուն մասին:

«Հրէական հարցը» կ'ըսէք քարեկամ մը որուն այս մասին խօսած էի, «Ես չէի գիտեր թէ հրէական հարց մը կայ»: Ի՛նչ անտարբերութիւն կամ ի՛նչ հասկացողութեան պակաս: Սակայն ասիկա օրուան ամենակարեւոր հարցն է, զէպքը որ կը յուզէ ոչ թէ միեւնիկ մարդկութեան մէկ մասը, այլ ամբողջ մարդկութիւնը: Դէպքերուն զէպքը

բոլորիս պատրաստ ըլլալ մահուան առջեւ:

Այսպէս բաժնուեցանք մեր Գրիգորէն:

Տէրը տայ որ այս սիրելի երիտասարդին մահը արթնութեան միջոց մը ըլլայ մեր երիտասարդութեան:

Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Աւետեան ընտանիքին եւ Աստուծոյ մխիթարութիւնը կը խնդրենք անոր ամէն մէկ անդամին համար:

Յ. ՀԷԼՎԱՃԵԱՆ

եղող Քրիստոսի երկրորդ գալուստը կրնայ քիչ ատենէն տեղի ունենալ, մինչ «ինչպէս Նոյի օրերը եղաւ» մարդիկ ուտելու և խմելու, զնելու եւ ծախելու, տնկելու և շինելու ետեւէ պիտի ըլլան որպէս թէ անբնական բան մը տեղի չունենար «Այն օրուան եւ այն ժամուն համար մարդ չգիտեր. ոչ ալ երկինքի հրեշտակները», բայց ասով մէկտեղ նշանները չեն պակսիր որոնք կը ցուցնեն թէ այդ օրը հսկայական քայլերով կը մօտենայ:

1897էն ի վեր երբ Հէրձըլ Սիօնական ընկերութիւնը հիմնեց, հրեաները խոստացեալ երկիրը վերադարձնելու համար մեծ յառաջացումներ տեղի ունեցած են: Հոն դարձեալ բնակչութիւնը բազմացնելու գործը փութացուեցաւ մեծ Պատերազմի դէպքերով, այսինքն Պաղեստինի թրքական տիրապետութենէն ազատումը. Ալէքսանդրիայի յաղթութիւնը առանց արիւն թափելու, 1920ին Դաշնակիցներու միաձայնութեամբ մանտային Մեծն Բրիտանիոյ տրուելը, Գերմանիոյ եւ ուրիշ երկիրներու հակասեմական մոլեռանդութիւնը. որ հալածուած սերունդը մղեց հոն ապաստան գտնելու եւ վերջապէս հրեաներուն իրենց կողմէ երկրին մէջ անհուն դրամադուլաներու կեդրոնացման կարեւորութիւնը:

Հոս միայն շատ համառօտ ակնարկութիւն մըն է որ կրնանք ընել այս վերջին քսան տարիներուն Պաղեստինի մէջ կատարուած ահագին յառաջդիմութեան մասին: Դարերով «երկիր մը ուր կաթու մեղր կը թղխէ» անբեր եւ ամուլ մնացած Աստուծոյ կողմէ այս վիճակին մէջ պահուած է, իր նախախնամութեամբ մինչեւ երկիրը կրկին իր հարազատ կալուածատէրերէն զրաւուի որոնք ներկայիս ցրուած են աշխարհի մէկ ծայրէն միւսը իրենց անհնազանդութեան պատճառաւ, մինչեւ որ հեթանոսաց ժամանակը լրանայ, ինչպէս Մովսէս և մարգարէները առաջուրն էր ըսած են: Այս վերջին ժամանակներուն երկրին բարգաւաճումը զարմանալի է: Երկրագործութիւնը և ճարտարարուեստը կը ծաղկին. ամէն տեղ արդի քաղաքներ կը բարձրանան եւ կըսուի թէ ծրագիրներ կը պատրաստուին Տաճարին վերակառուցման համար: Մեծ թիւով ծառեր տնկուած են և ճախնային մասերը չորցուած են որով անհետացուած է գիւղերու պատուհասը եղող ջերմը: Պաղեստինի և Միջագետքի ելեք-տրականութիւն տալու համար Յորդանանու կար-

գի դրուելը և ուրիշ մեծ գործեր փութով կը յառաջանան:

Մեռեալ ծովուն խորը հանգչող անհուն հարստութիւնը այս սքանչելի երկրին բոլոր գիւտերուն թերեւս ամէնէն զարմանալին է: Հազարաւոր տարիներէ ի վեր այս խորհրդաւոր ծովը զոր ոմանք կը խորհին թէ Սողոմ քաղաքը կը ծածկէ (Միջերկրականէ 40 մետր ցած) նկատուած էր որպէս մահուան ծովը, ուր որ եւ է կենդանութիւն ունեցող էակ չէր կրնար ապրիլ: Բայց հիմա նոյն իսկ իր անունը սխալ անուանակոչում մըն է, վասն զի անիկա ճշմարիտ կեանքի ծովը եղած է: Անոր եզերքներուն վրայ լողարաններ շինուած են, ուր այցելուներ և հիւանդներ կ'երթան իրենց գորութիւնը վերադուրեւելու համար Աղբրով լեցուն իր նեխած ջուրերէն ալիւր կը հանուին, քիմիապէս գտուելէն ետք նաւերով Եւրոպա կը փոխադրուին: Շեմիգալ թերթի խմբագիրը Մեռեալ Ծովուն արտադրութիւնը կարժեցնէ որպէս անսպասելի, աւելի քան երկու հազար միլիոն սթէրլին, թիւ մը ու աշխարհի բոլոր դրամատուններու հարստութիւններէն աւելի է:

Մեր Տէրոջ երկրորդ գալուստը զանց առնելով նախորդ ըստածները զլիաւորաբար հրէական հարցին տնտեսականին կը վերաբերին, բայց ճիշդ այս անպաշտպան երկրին ընդարձակ եկամուտի աղբիւրները եւ ահագին հարստութիւններն են որ հակասեմական ազգերու ընչաքաղցութիւնը պիտի զրգուն և յառաջ պիտի բերեն այս աշխարհի վերջին պատերազմը, Արմագեդոնի վերջին կռիւը, ուր Տէրը ինք, փողին ձայնով հոգեբանական պահուն պիտի իջնէ և օգնութեան պիտի երթայ իր հին ժողովուրդին որուն դէմ հաւաքուած պիտի ըլլան երեք մեծ Դաշնակցութիւնները, Հիւսիսայինը, Ռուս և Գերման դաշնակցութիւնը, Հռովմէական կայսրութեան դաշնակցութիւնը և Արեւելեան թագաւորներու դաշնակցութիւնը: Այս թշնամիներու պարտութենէն ետք Հազարամեական թագաւորութիւնը պիտի սկսի եւ «Տէրը բոլոր երկրի վրայ թագաւոր պիտի ըլլայ»:

Թէեւ մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցած է հրեաներուն Քրիստոսի հանդէպ ունեցած դիրքին մէջ, բայց մեծամասնաբար որպէս անհաւատներ անոնք Ս. Երկիրը կը վերադառնան. անոնք երբէք իրենց մեղքը պիտի չճանչնան առանց տեսնելու «զայն որ խոցեցին»: Այն ատեն

ԱՆՑԵԱԼԻ ԷՋԵՐԷՆ

Ֆառաշիկայ թիւերուն մէջ ջանք պիտի ընենք այս փերնազրով անցեալի Աւետարանական եկեղեցւոյ առաջին դէպքերէն, որքան որ անոնք մեր հասողութեան տակ իշնան, ընտրովի մատուցանել «Բանքեր»ի ընտանիքին, այնպիսիներ որոնք պիտի հետաքրքրէին զայն:

Ասոնցմով պիտի տեսնենք այն ժամանակուան մեր եկեղեցւոյ մէջ տիրող առաջին: Եւ ինչպէ՞ս էր զոնորութեան ոգին, որ զբաւած էր զանոնք. պիտի ջանանք ներշնչուիլ անոնցմէ, յիշելով մեր հաւատքի առաջնորդները և անոնց վարքին ու աշխատութեան հետեւանքին նայելով անոնց հաւատքին նմանող ըլլալ:

Գրութիւնները կը ներկայացնենք ճիշդ այնպէս, ինչպէ՞ս կը գրէին մեր հայրերը մօտաւորապէս հարիւր տարիներ առաջ առանց մեկնաբանութեան, թողելով որ անոնք խօսին ընթերցողին պէտք եղածը:

Խմբ. «Բանքեր»ի

ԽԱՐԲԵՐԴՈՒ ԳԻՒՂԵՐԸ

Փետրեան 6-ը պիւղը Խարբերդու քաղաքէն երկու ժամու չափ հեռու է: Աս զիւղին հայազգի բնակիչներուն տունները 12(1) ի չափ կը հաշուուին:

Տէրովը գործն այս զիւղիս մէջ ասկէ՝ հինգ տարիի չափ առաջ զարմանալի կերպով մը սկսեց: Բնիկ և զրիթէ կարգաւ չգիտցող մէկն աշխարհաբառ Աստուածաշունչ մը ուրիշ տեղէ

պիտի կատարուի Եզեկիէլի մարգարէութիւնը, «Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. ահա ես Իսրայէլի որդիները պիտի առնեմ այն ազգերուն մէջէն ուր զացին ու զանոնք ամէն կողմէն պիտի ժողվեմ, ու զանոնք իրենց երկիրը պիտի բերեմ... ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան, ես ալ անոնց Աստուած պիտի ըլլամ»:

Մինչ այդ, Հրեաներուն մէջ գործող զանազան քրիստոնէական միսիոնարութիւններ եռանդով կ'աշխատին արտորցնելու այն օրը ուր, Մեհիան իրենց զուխը ունենալով Հրեաները ազգերուն առաջնորդը պիտի ըլլան աշխարհը աւետարանելու համար:

Թարգմանութիւն Նոթր Էսփէրանսէն

Ի.Յ.Ա.Բ.Ր.Ա.Ն.Ա.Մ.Ե.Ա.Ն.

այս զիւղը բերելով, երբ զեղացիներն աս գիրքը կարդալով քննութիւններ ըրին, Աստուածային պայծառ լոյսն անոնց վրայ ծագեց, անանկ որ անոնց մէջ Աւետարանական ժողովուրդ մը յառաջ եկաւ, որ հիմա արու և էգ ընդամենը հարիւրի չափ անձինքներէ կը բաղկանայ, քսան ալ եկեղեցւոյ հաղորդական անդամներ ունի:

Աս քրիստոնեաները փափաքելով որ իրենց վրայ ձեռնադրեալ հովիւ մը ունենան, ազօթքով ու խնդրուածքով որոշեցին որ Կապան Մատենցի Արքարեան Պ. Պետրոս իրենց վրայ հովիւ ըլլալու կանչեն: Յիշեալ անձը Խարբերդու Աստուածաբանական Ճեմարանին աշակերտներէն մէկն է, և տասնըմէկ տարիէ ի վեր իր երկրին մէջ Աւետարանականաց վարժապետութիւն ու քարոզչութիւն կ'ընէր, բայց Աստուածային Նախախնամութեամբը աս զիւղն իրեն վիճակ ելլելով, հովուութեան պաշտօնը յանձն առնելու համար աս քրիստոնեաներէն հոս հրաւիրուեցաւ:

Ձեռնադրութեան հանդէսը կատարուեցաւ 1865 Յունիս 23 ին հետեւեալ անձանց ներկայութեամբը:

Իշմէէն, Պատ. Գրիգոր Թամազարեան. Պարոն Մարտիրոս Կիւլէսէրեան. և Պարոն Ղուկաս Պօղոսեան Հապուսեցի:

Արապկիրէն, Պետրոս աղա:

Մալաթիայէն, Պր. Մարտիրոս Կիրակոսեան:

Կապան Մատենէն, Պր. Արքար Արքարեան:

Տիգրանակերտէն և Գթրպլէն, Շէմաս Սալիպայ:

Խարբերդէն, Հովիւ Պատ. Մարտիրոս Շմաւոնեան, Հաճի Յակոբ Սարկաւազ, Մանուկ աղա-Հաճի Յովհաննէս, աղա, և պատուելիք Ալէն և Հռիւրը:

Կարինէն, Պատ. Բարմըլի:

Մարտինէն, Պատ. Ուրիւմաս:

Խուլագեղէն, Պարոն Յակոբ, եկեղեցւոյն քարոզիչը:

Ասոնք յիշեալ գեղը եկեղեցական ժողով մը կազմելով, իրենց մէջէն Պատ. Հռիւրը Նախագահ և Պատ Մարտիրոս Շմաւոնեանը զբաղիր ընտրելէ ետքը նախ եկեղեցի կազմելու համար հաւանութիւն ուզուեցաւ և առնուեցաւ: Ետքը որոշուեցաւ որ Ձեռնադրելին քննուի. ուստի

քննութեցաւ և ընդունուեցաւ: Եկեղեցին կազմուե-
լու ատեն կատարուած պաշտօններն են:

1. Սուրբ Գրոց ընթերցում, աղօթք ու երգ՝ Պատ.
Գրիգոր Թամզարեանը:

2. Դաւանանք ու հաւանութիւն՝ Պատ. Մարտիրոս
Շմաւոնեանը:

3. Խրատ եկեղեցիին՝ Պատ. Ուիլեամս:

4. Աղօթք ու երգ՝ Պատ. Գրիգոր:

Աս պաշտօնները լմնալէն ետքը ժողովքը
արձակուեցաւ մէկ ժամ միջոց պարապոյ տըր-
ուելով: Մէկ ժամէն ետքը ձեռնադրութեան հան-
դէսը կատարուեցաւ հետեւեալ պաշտամունքով:

1. Օրհնութիւն խնդրել, երգ, Սուրբ Գրոց ընթերց-
մունք և աղօթք, Պատ. Բարմըլի:

2. Երգ և քարոզ, Պատ. Ալէն, որուն թնաքանն էր
Մատթ. ԻԸ 18. 19. 20:

3. Ձեռնադրութեան աղօթք Պատ. Հուիլըր:

4. Երէջներուն կողմանէ նորընծայ երէցին ընկե-
րակցութեան աջ՝ Պատ. Գրիգոր:

5. Խրատ հովուին Պատ. Հուիլըր:

6. Ժողովուրդին խրատ, երգ և աղօթք Պատ.
Մարտիրոս Շմաւոնեան:

7. Արձակման օրհնութիւնը նորընծայ:

Աս հանդէսին ներկայ գտնուողները ընդ
գիւղացի և ուրիշ տեղերէ եկողներ ընդ ամէնը
800 ի հափ մարդիկ էին:

Հանդէսը պարտէզի մը մէջ ծառերուն շուքին
տակը կատարուեցաւ և տեսարանը հանդէսին
ներկայ գտնուողներուն շատ զուարճալի և բեր-
կրալի էր: Գիւղին Աւետարանական եղբայրնե-
րու ջիւղմեռանդութիւնը բաւական յստալից
և ուրախութեան առիթ մըն է. ասոնք իրենց վրայ
նոր ձեռնադրեալ հովուին ամսականին առ այժմ
կէսը կու տան, տարուէ տարի ալ աւելցնել խոս-
տացած են:

Հիմա իրենց հովուին համար յատուկ տուն
չիսելու ալ ձեռք զարկած են, կը փափաքին, նաև
կը պատրաստուին Տէրոջը պաշտամունքները
կատարելու համար յատուկ ժողովարան շինել:

Աս եղբայրները Աստուածաշունչ ծախելու և
գնելու, ուրիշ գեղեր քարոզչութեան երթալու, և
իրենց դպրոցներուն համար մեծ ջանքով աշխա-
տելու ու հոգ տանելու մէջ ալ իրենց ջիւղմեռան-
դութիւնը կը յայտնեն:

Հետեւեալ օրը, Յունիս 24.15 անդամներէ բաղ
կացեալ ուրիշ եկեղեցի մըն ալ խուլա գիւղը
կազմուեցաւ, Պատ. Յակոբ Հապուսեցի իբրեւ
տնոր հովիւը ձեռնադրուեցաւ: Յիշեալ գիւղն ալ
Խարբերդէն երկու ժամու հափ հեռու է, բայց
Փերչէնճ գեղէն տարբեր ուղղութեամբ: Աս ձեռ-
նադրութեան համար կազմուած ժողովքին ան-
դամները վերոյիշեալ ժողովքը կազմող նոյն
անձինքն էին: Պաշտօնը հետեւեալ կերպով կա-
տարուեցաւ, ձեռնադրութեան քարոզը Խարբերդի
հովիւը Պատ. Մարտիրոս. աղօթքը Պատ. Ալէն,
ընկերակցութեան աջ ձեռքը Պատ. Պետրոս
Արզարեան, Փերչէնճցի նոր հովիւն, հովուին
խրատը Կարնոյ քարոզիչը Պատ. Բարմըլի: Ժո-
ղովուրդեան խրատը Մարտինի քարոզիչ Պատ.
Ուիլեամս:

Աս ժողովուրդն իր հովուին շատ յարեալ է
անոր ամսականին կէսն ի սկզբան կը վճարէ և
տարուէ տարի անոր վրայ բան մը աւելցնել կը
խոստանայ մինչեւ որ բոլորն իր վրայ առնելու
կարող ըլլայ: Աս կողմերը կանոն եղած է թէ
եկեղեցի մը չկազմուի առանց ձեռնադրելու մի-
անգամայն հովիւ մը որ անոր վրայ հսկէ և ա-
նիկա հողայ. և թէ հովիւ մը ունենալու համար
եկեղեցին ու ժողովուրդն անոր ամսականին զո-
նէ կէս մասը սկիզբէն հոգալու փոյթ ընէ: Աս
կերպով եկեղեցիներն իրենց սկզբնաւորութենէն
անկախութեան կերպարանք մը առած ըլլալով,
շուտով բոլորովին անկախ ու թէ գիրենք և թէ
ուրիշները հոգալու պատրաստուած կ'ըլլան:

Խուլա գիւղի աւետարանական ժողովուրդը,
միսիոնարներէն միայն 750 զուրուշ օգնութիւն
առնելով իր հովուին: ձեռնադրութենէն ետքը, ա-
նոր համար վայելուչ և հեշտ բնակարան մը չի-
նեց: Ասիկա ան ժողովուրդին մշտնջենաւոր
ստացուածն է և միշտ իբրեւ երիցատուն պիտի
գործածուի: Նոյնպէս այս տարի Խարբերդ քաղ-
քին բոլորովին գտնուող Հուզլի, Հոզլի և Շուք
Հաճի գիւղերուն մէջ երիցատուններ և մատուո-
ներ ժողովուրդեան ծախքովը շինուեցան, որոնց
ամէն մէկուն համար միսիոնարները միայն մէկ
մէկ քիչ օգնութիւն ըրած են: Խարբերդի և Ա-
րարեկիւրի եկեղեցիները հիմա իրենք գիրենք մի-
նակ կը հոգան և սա գաւառին մէջ բոլոր եկե-
ղեցիներն անկախ ըլլալու և Պօրտ ընկերութեան
այլեւս բեռ չըլլալու ջանք կ'ընեն:



ՏԵՂԵԿԱԳԻՐ ՖԻԱՆՍԱՀԱՅ ԱԻՅՏ. ԵԿԵՂԵՑՆԵՐՈՒ ԺԵ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ Ի ՄԱՐՏԷՅԼ

2-5 ՅՈՒԼԻՍ 1946

Նախ, մեծ երախտագիտութեամբ եւ որդիական զգացումներով շնորհակալութիւն կը յայտնենք մեր սիրոյ Աստուծոյն, որ զմեզ դարձեալ արժանացուց ունենալու ֆրանսահայ Աւետ. Եկեղեցիներու տարեկան համագումարը որ տեղի ունեցաւ ի Մարսէյի Յուլիս 2 - 5:

Համագումարին կը մասնակցէին A.C.O.-ի միսիոնարական ընկերութեան տնօրէն Տրեմ. Պերոն, A.C.O.-ի նախագահ Պրն. Գիւշ. Զուլիցերիական Կոմիտէի նախագահ եւ com. directeurի անդամ եւ փոխնախագահ Պրն. Նիւսլէ, գլխաւոր գանձապահ Պրն. Ռիվէ, Հոլանտացի բարեկամ եւ ապագայ միսիոնար Պրն. Վիսքըր, Աւետ. Իրաքանութեան ներկայացուցիչ Պրն. Սէր, եւ Մարսէյի ֆրանսական Եկեղեցիներու հովիւներէն քանի մը հոգի:

Բարիկ իսիէն աւետարանիչ Արմենակ Միսիոնար եւ եղբայր Թորոս Գալսէրլեան: Բարիկ Ալֆոր՝ վիլէն վեր. Ա. փափագեան եւ եղբայր Լեոն Պիլէգիկեան: Լիոնէն վեր. Գ. Խայկեան եւ եղբայր ձիվան Թուլսմարեան: Վալանսէն վեր. Ի. Աբրահամեան: Բոն տ'Թալընայէն եղբայր Մարտիրոս Սագալեան: Տէսինէն աւետարանիչ Կալվին Պարսուժեան, վեր. Պարսուժեան (հայր) եւ եղբայր Հրանդ Թիլպեան: Մօնթէլիմարէն վեր. Վ. Սահակեան եւ եղբայր Ռուբէն Դաւիթեան: Վիլէնէն աւետարանիչ Տիգրան Մկրտիչեան, բացակայ էր եղբ. երեմեան: Սէնթ-Էթիէնէն աւետարանիչ Գարեգին Սիսլեան եւ եղբայր Արմենակ Ալթունեան: Մարսէյէն վեր. Յովհ. Ղազարոսեան եւ եղբայր Շահին Մակարեան: Պօմոնէն վեր. Զ. Պուտաքեան-Կարտանէն աստուածաբանական ուսանող եւ Կարտանի աւետարանիչ Յարութիւն Հէլվաճեան, Ս. Լուէն աւետարանիչ Կ. Պատաքեան եւ եղբայր Պօլոս Յակոբեան: Սէն Թիւթուլանէն վեր. Մ. Վէքիլեան եւ եղբայր Գրիգոր Գալսեան:

Ա. ԺՈՂՈՎՆԵՐ

Համագումարէն մէկ օր առաջ Յուլիս 1 ին կէսօրէն յետոյ ֆրանսահայ Աւետ. Եկեղեցիներու հովիւներուն յատուկ ժողով մը տեղի ունեցաւ առաջնորդութեամբ տոքթ. Պէրոնի, որ նիւթ ունենալով Աստուծոյ Թագաւորութիւնը, Սբ. Գրային գանազան հատուածներով ցուցուց թէ «Սատանայի Թագաւորութիւնը վերջ պիտի գտնէ եւ Աստուծոյ Թագաւորութիւնը պիտի հաստատուի եւ այսօրուայ անհասկնալի խըն-

դիւնները պիտի լուծուին: Առաքեալները, մեր կարծածէն աւելի Աստուծոյ Թագաւորութեան մասին կը խօսին իրենց Թուղթերուն մէջ:

(Գործք. 20, 25: 28, 23. Հռով. 14, 17: Ա. Կոր. 15. 24 եւ 50): Աւետ. այսօրուան մեր պատգամը պէտք է ըլլայ Թագաւորութեան պատգամը.

2.—ԱԻՅՏԱՐԱՆԶԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Համագումարին առթիւ Յուլիս 3 Զորեքշաբթի իրիկուն, վերապահուած ըլլալով ձեռնադրութեան հանդէսին, միւս երեկոները տեղի ունեցան աւետարանչական ժողովներ, Մարսէյ, Պօմոն Ս. Լու, Ս. Անթուան, եւ Ս. Լուի գանազան նիւթերու շուրջ: Տէրը ցանուած սերմերը պտղաբեր ընէ Աստուծոյ Թագաւորութեան յառաջացման համար:

3. ԱՂՈԹ-ԱԺՈՂՈՎՆԵՐՈՎ ԴԱՍՄԱԽՕՍԱԿԱՆ

ԺՈՂՈՎՆԵՐ

Միութիւնը զուգադիպած ըլլալով Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հարիւրամեակի սկզբնաւորութեան, ժողովներուն նիւթերը այդ ուղղութեամբ ընթացան: Ստորեւ կուտանք համառօտ ամփոփումը այդ ժողովներուն:

1. Doct. BERRON-ի ՊԱՏԴԱՄԷՆ

Բաղդատութեան դրուելով ֆրանսահայ Աւետարանական Եկեղեցիներու նախկին եւ ներկայ հոգեւոր կեանքը՝ մեծ թերութիւններ կը տեսնուին: Պէտք է սեփական պարելով քրիստոնէական յիշկեանք մը, արտադրելով իրական պտուղներ: Միսիոնարական կրակը պէտք է մեր մէջ արծարծուի: Արդեօք միսիոնարական կոչումներ ունի՞նք:

2. ՎԵՐ. ՊՈՒՏԱՔԵԱՆԻ ՆԻԻԹԷՆ

Հայ Աւետ. Եկեղեցւոյ Զօրութեան Գաղտնիքը.—

Հայ Աւետ. Եկեղեցին ծնած է Հայ Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր տարրէն: Զայն կազմողները ապաշխարութեամբ (վերստին ծնունդ) ազատուած էին նախապաշարութիւնէ, անոնցմէ իւրաքանչիւրը Սուրբ Հոգիով կրնար «Աբբա Հայր աղաղակել:

Անոնց զօրութեան գաղտնիքը Աստուծոյ անխարդախ կամն էր, թէ կը սնանէին անկէ եւ թէ կը բարոգէին զայն:

Մէկտեղ ժողովուրդը իբր մեծ եւ կարեւոր պարտականութիւն չէին թողուր: Շատ անգամ դաշտերն ու անտառները կը հաւաքուէին Աստուծոյ խօսքին շուրջ, ոչ մէկ բան կ'արգիլէր զանոնք ժողովի երթալէ: Սպառնալիքներու առջեւ անոնք կրցան ըսել թուրք պաշտօնեային «Էֆէնտի, մենք պատրաստ ենք նոյնիսկ մեր արիւնը թափելու, մեզ չէք կրնար արգիլել այս գործէն»:

Աւետարանի քարոզելուն նպաստեցին

նմանապէս լուսաւորուած քաջանաներ, որոնց մէջ նշանաւոր էր չըթանէս հայրիկը, լեցուն՝ եկեղեցին բարեկարգելու սիրով: Սնունք ունէին նաեւ արտաքին միսինարուծեան սէրը: Կ'աշխատէին նոյնիսկ հրեաներու ճանչցնել իրական Մեսիան, Առանձնական եւ հաւաքական աղօթքի շատ ժամանակ կուտային: Թէեւ հայաճուեցան եւ ունեւ ալ աքսորուեցան, սակայն ոչ մէկ բան կըրցաւ կեցնել Սուրբ Հոգւոյն շարժումը եւ մենք այսօր կը կանգնինք երկրորդ հարիւրամեակի մը արշալոյսին առջեւ:

Տէրը զմեզ առաքեալներուն նմանող մեր հաւատացեալ հայրերուն պէս յաղթական հաւատքով, անշէջ եւ անպարտելի սիրով եւ Սուրբ Հոգւոյն կրակով լեցուցած առաջնորդէ, Քրիստոսի մարմնին ամենուն եւ իր փառքին համար:

ՎԵՐ. ՎԱԿՆԷՐԻ ԲԱՆԱԽՈՍԹԻԹԵՆԷՆ

Աւետարանականութեան երեք հիմնական տարրերն են.

ԴԱՏԱՍՏԱՆ, ՏԵՍԻԼՔ ԵՒ ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ

Լուսէր կ'աղաղայէր «ո՛վ պիտի ազատէ զիս իմ մեղքէս» . Կաթմոն Ֆրոմէլ կ'ըսէ, «ինքզինքս կը ձգեմ դատուելու եւ մեղցուելու Աստուծոյ կողմէն»:

Ուրեմն կ'ըսենք մեղքի ահաւոր սահմուկեցուցիչ, յայտնութենէն յետոյ, երբ ինքզինքնիս կը դատենք Աստուծոյ լոյսին մէջ, այն ատեն, Աստուծոյ մեղի համար ըրած աներեւակայելի մեծ գոհողութիւնը տեսնելով՝ չենք կրնար մեր հանգիստը եւ մերինք փնտռել, հապա անվերապա հօրէն կը նուիրուինք Աստուծոյ իբր կենդանի զոհ, զայն բանաւոր պաշտօն մը եւ Աստուծոյ մէջ տրուած շնորհք մը նկատելով:

Լուստը շուանտացի նշանաւոր փիլիսոփայ Էրասմի համար ըսած է «ի՛ր հանգստութիւնը խաչէն աւելի կը սիրէ»: Ինչ տխուր կեանք:

Լուստը իր վերջին օրերուն անգամ, մղուած քրիստոնէական սէրէ, գնաց իր ծննդավայրը, հաշտեցնելու համար գժտուած հաւատապետներ:

Տէրը Լուստի ինման ծառաներ հանէ իր գործին համար:

Բարեկարգեալ Եկեղեցիներու տարբերութիւնը Կաթոլիկ Եկեղեցիներէն երեք զիաւոր կէտերով:

Շնորհքով արդարութիւն, փրկութիւն:

Սբ. Գրքի հեղինակութիւնը:

Սբ. Հոգւոյն ներքին խաղաղութիւնը:

Ի՞նչ պատասխեցաւ Եսայեայ երբ Աստուծոյ փառքին առջեւ գտնուեցաւ, ինքզինք դատապարտելով «վա՛յ ինձի» ըսաւ եւ շնորհքով ազատեցաւ, փրկուեցաւ:

Լուստը փրկութիւնը հաւատքով գտնելէն յետոյ, կ'երգէ ըսելով, ուր աւելի եղաւ մեղքը

հոն աւելի եղաւ շնորհքը: Ուրեմն կը հաւատաւ ըսելը, կը հրաժարիմ անձնական արդարութենէ, կը յօժուիմ եւ վստահ եմ փրկութեանս ըսել է:

Իւրաքանչիւր վայրկեան մոլաւոր, ամէն վայրկեան արդարացած, կ'ընէ Լուստը:

Սբ. Գրքին հեղինակութիւնը եւ Սբ. Հոգւոյն վկայութիւնը:

Սբ. Գրքը Աստուծոյ խօսքն է, անիկա այն ճամբան է որ Քրիստոսի կը տանի եւ Քրիստոս հաւտացեալին կուգայ: Բոլոր Սբ. Գրքը Յիսուս Քրիստոսի վրայ կը կեդրոնանայ

Կալվին կ'ըսէ, մենք չենք ընկրկիր ըսելով ճերմակ է, երբ գոյնը ճերմակ է, սեւ, երբ սեւ է՝ նմանապէս մեր ներքին ձայնը մեզի կ'ըսէ թէ Սբ. Գրքը ճշմարտութիւն է: Սբ. Գրքին եւ մեր սրտին մէջ գտնուած հոգիին վկայութիւնը մեզի վստահութիւն կուտայ (Հոով. 8, 46.)

Բողոքականութիւնը մարդուն ազատութեան «շահիրտն»ը եղած է: Ասկէ ծագում կ'առնէ միսինարութիւնը, աւետելու իրական ազատութեան բարձր լուրը թշուառ մարդկութեան:

Բ. ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

Բոլոր տեղեկագիրները գրաւոր եւ ոմանք ֆրանսերէն լիզուով ալ ներկայացուեցան:

Տեղեկագիրներու պարունակութիւնները քաջալիքական էին ընդհանրապէս: Սակայն իրական արթնութեան մը կը կարօտինք: Ս, Հոգւոյն մաքրող կրակին եւ զօրաւոր շունչին պէտք ունինք, հաւտացեալ եւ արթուն բանակ մը ոտքի հանելով հոգեւոր նուաճումներ կատարելու եւ յաղթական յառաջանալու համար: Ազօթքով եւ աղաչանքով խնդրենք որ Ս. Հոգին փչէ, Աստուծոյ կենդանարար շունչը փչէ եւ չորացած ոսկորները միացած՝ վեհատեսիլ սուրբ բանակը կազմեն: Ով Տէր, կը կարօտինք Գու սուրբ այցելութեանդ:

Գ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Բաց քուէով եւ ձայնիւ մեծամասնութեամբ Վ.Ի. Աբրահամեան վերընտրուեցաւ Գործադիր Մարմնի անդամ:

2. Բանակումի գործով զբաղող յանձնախումբը վերընտրուեցաւ բաղկացեալ հետեւեալներէ: Աւետարանիչք. Գ. Սիւլեան, Կ. Պարտումեան, Յ. Հէլվաճեան եւ միութեան քարտուղարը:

3. Բանբերի խմբագրական մարմնի նոր անդամ ընտրուեցաւ Աւետարանիչ Ա. Միսիրեան:

Դ. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. Պիտեմէի քննութիւն.

Տր. Պէրոն ցաւով յայտարարեց միութեան ժողովին որ,

1. Պատերազմին հետեւանքով Ա.Բ.Օ ի բարե-

կամենիք շատեր մեռած, պաղթած կամ աղքատացած են: Միսիոնարութիւնը այսօր չունի նախապատերազմեան աղբիւրներէն, և թէ երկար ժամանակի պէտք կայ նախկին հաւասարակշռութիւնը ձեռք բերելու համար:

2. Հոլանտա, որ այնքան լայն չափով մը կ'օգնէր, այսօր կաշկանդուած է քանի որ հնար չկայ այդ երկրէն դրամ արտածելու:

3. Զուիցերիա, իրերու բերմամբ, իր բոլոր ուժը պիտի կեդրոնացնէ Սուրիոյ գործին վրայ:

4. Հետեւաբար պէտք է հետաքրքրել Միացեալ Նահանգաց մեր բարեկամներն ու Աւետարանականները, որ յօժարին բացառիկ գոհողութիւններու:

Միութիւնը որոշեց հաւատքի քայլ մը տունել նիւթական մարզին մէջ գոյացնելու համար շօշափելի գումար մը արտակարգ ծախքերէն դուրս, և տարուէ տարի ալ աւելցնել գումարը:

2. Եկեղեցապատկան շէնքերը, Ֆրանսահայ Աւետ. միութեան սեպականութիւնը ընելու հարցը մէջ տեղ զրոնելով, յետ խորհրդակցութեանց, որոշուեցաւ յետաձգել զայն յաջորդ միութեան, հասուն վիճակի մը մէջ լուծելու և որոշ կարգադրութիւն մը ընելու համար:

3. Հայ Աւետարանական եկեղեցիներու և Աւետարանականին հետ գործակցելու հարցը խորացած վիճակի մը մէջ միութեան ներկայացընելու համար, որոշուեցաւ որ Վեր. Ղազարոսեան, յարաբերութեան մէջ մտնելով Ամերիկայ և ուրիշ երկիրներու մէջ գտնուող Աւետ. եկեղեցիներու հետ տեղեկագիր մը ներկայացնէ 1947 ի միութեան ժողովին:

Միութիւնը մէկ տարուան համար արտօնեալ քարոզիչի իրաւունք տուաւ Աւետարանիչք Ա. Միսիոնարների, Կ. Պարտումեանի, Տ. Մկրտիչեանի, Գ. Սիսեանի, և Կ. Պետաքեանի:

5. Բանքերի խմբադրական կազմը պիտի ընտրուի երկու տարին անգամ մը, քուէարկութեամբ միութեան ժողովին մէջ, Գործադիր մարմինն հետ:

6. Որոշուեցաւ Հ. Ա. Եկեղեցւոյ հարկւրամեակը տօնել Բարիզ, Լիոն և Մարսէյլ: Բարիզի մէջ պիտի տօնուի, երկու եկեղեցիներու գործակցութեամբ և Ա. Ք. Օ. ի տնօրինութեան ղեկավարութեամբ:

7.— Որոշուեցաւ Հ. Ա. Եկեղեցւոյ հարկւրամեակին առթիւ ԲԱՆՔԵՐի բացառիկ թիւը ձեռքէ 50 Ֆրանքի ծախել:

8.— Որոշուեցաւ նաեւ 1947 ի միութեան ժողովը Բարիզի մէջ գումարել:

ԱՅԼԵԻԱՅԻՔ

1.— Նոր ընդունուելիք կանոնագիր - օրագրի քննութիւնը անցեալ տարի յետաձգուած ըլլալով՝ շարունակուեցաւ և յօդուած առ յօդուած կարգացուելով ու մի քանի փոփոխութիւններով վաւերացուեցաւ և ընդունուեցաւ:

2. - Գործադիր մարմինը եկեղեցիներու ներքին կեանքին վերաբերեալ կանոնագիր մը մշակելով պիտի ներկայացնէ յառաջիկայ միութեան ժողովին:

Յուլիս 5 Ուրբաթ կէսօրէն վերջ Վեր. Խայիկեանի նախագահութեամբ, Ս. Հաղորդութեան Խորհուրդի կատարուելով փակուեցաւ 1946 ի համագումարը:

Միութեան Քարտուղար Մ. ՎԷՔԻԼԵԱՆ



Միութեան Ժողովի անդամոց խմբանկարը